

Վ. Լուսկեվիչ՝ «Բնորոշելու երկու Մեծ Թագավորութիւններէ», փոխադրեց Յ.  
Ք. Սառիկեան. Ս.-Պետերբուրգ, 1903, գ. 30 կոպ.

Երկրագնդի գօտիների մասին համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ՝ հեղինակը նկարագրում է զանազան գօտիներում ապրող կենացնիներին և բոյսերը: Ըսթերցողի առաջ բացւում են բազմաթիւ հետաքրքիր տեսարաններ, և՛ հիւսիսի սառցային անհուն տարածութիւններն իրանց սակաւաթիւ բնակիչներով, և՛ Սիբիրի տունդրան իր ողորմելի բուսականութեամբ, ասըզ զատերև ու տերեւաւոր անտառները՝ իւրաքանչիւրը իրան յատուկ բնակիչներով, և՛ տաք երկրների հրաշալի բուսականութիւնը... նկարագրութիւնը յաջող է, լեզուն պարզ և գրաւիչ, ինչպէս և հեղինակի միւս գրուածքներում: Թէկ հայր Սառիկեանը փոխադրութիւն է անուանում իր աշխատութիւնը, բայց իսկապէս դա թարգմանութիւն է (Կրճատումներով): Հ. Սառիկեանը անկարող է եղել պահպանել ամբողջովին հեղինակի ոճի գեղեցկութիւնը, շատ տեղ նկատւում է օտար լեզուի ազգեցութիւնը (օր. էջ 50), կան նաև անաջող թարգմանուած տերմիններ, մէկ տեղ էլ բնագրի մէջ մտած սրբագրական սխալը չը նկատելով հ. Սառիկեանը ինքը ևս սխալմունքի մէջ է ընկել գրելով «Էկվալիպտներ» փոխանակ «Էկվալիպտներ» ևայն:

Սակայն չը նայած վերոյիշեալ թերութիւններին, այսուամենայնիւ գտնում ենք հայր Սառիկեանի աշխատութիւնը օգտակար. ցանկալի է, որ այդ գրքոյիկը լայն կերպով տարածուէր ժողովրդի մէջ: Գրքոյիկը զարդարուած է բազմաթիւ գեղեցիկ պատկերներով:

Բ.

«ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՆ»: Ժողովրդ. երգաւան. խմբագրեցին Կոմիտաս վարդ. եւ Մանուկ Աբեղեան. 1903 թ. Վաղարշապատ:

Մինչև այժմ մեր ժողովրդական երգարանները թէ բովանդակութեան և թէ եղանակների կողմից մեծ մասամբ իւղաթիւրումների են ենթարկուել: Երբ լսեցինք թէ ժողովրդական երգերի հրատարակութեան ձեռնամուխ են եղել Կոմիտաս վարդապետն և Մ. Աբեղեանը, մենք ուրախացանք, որովհետեւ գիտենք հայր Կոմիտասի հմտութիւնը ժողովրդական եղանակների և պ. Աբեղեանի գիտական պատրաստութիւնը առնասա-

բակ աղքագրական գիտութեան և ի մասնաւորի հայ ժողովրդական բանահիւսութեան նկատմամբ։ Այսպիսի տրամադրութեամբ զինուած դէսի հրատարակիչները, մենք ձեռք զարկինք նրանց «Հազար ու մի խաղ» երգարանի ընթերցմանը։

Անշուշտ հրատարակութեան միտքը շատ գեղեցիկ է՝ տալ ժողովրդական երգերի խմբագրուած ժողովածու։ Դժբախտաբար մեր սպասելիքը՝ չարդարացաւ։ Երգերի մէջ կան կտորներ, որ ժողովրդական չեն, այլ թխուած, սարբած։ Բերենք օրիւրակներ։

№ 1 երգի ը և դ քառատողերը ժողովրդական չեն ու չեն երգուած. այդ երգը երկու քառատող ունի միայն։ № 6 երգը հիմնովին աղճատուած է. դա սկսում է այսպէս.

Հօյ նարէ, Գութանը հաց կտանիմ,

» » Բերանը բաց կտանիմ.

» » Գութանը հաց կտանիմ,

» » Տապկած ծածուկ կտանիմ ևայլն.

№ 10 երգն սկսում է այսպէս։ «Երկինքը ամպ է գետինը կարկուտ Ալէքսան,

իմ Ալէքսանի ձին է կապուտ Բալասան ևայլն։

Երգի շինծութիւնը առաջի քառատողի «Հոգեակս հոն է» տողն է մատնում, որ ժողովրդական չէ։ № 11. ժողովուրդը ձին չի թամբուած այլ «թամբուած» է։ № 13. դ քառատողն ակներև սարքովի է. ըստ իս միայնն ա քառատողն է քուն ժողովրդական։ № 17 երգի առաջին երկտողը սարքովի ենք հաշուած, ինչպէս և մնացած մի երկուաը։ №№ 20. 21. 22 և 24 երգերի վերջին քառատողերը թխովի են։ № 29 երգն այսպէս է։

Կայնել ես վարդի հովին, հովին, հովին, հովին,  
Քամին տայ գոշիդ մովին, մովին, մովին, մովին։

Ժողովուրդը կուրծք չը գիտէ ասում է սիրտ և դօշ. չորրորդ տողի «ծովինը» ժողովրդական չէ պէտք է «մաւին» լինի։ № 31 երգի մէջ «Հօյ նազան իմ» չէ, այլ «Հօյ նազանըմ»։ № 33 երգը դարսեցոց երգ է և հիմնովին աղճատուած է ժողովածուի մէջ. ահա իսկականը։

«Ես վերէն կու գայի,  
Դուն դուռը բացիր,  
Զեռքդ ծոցդ տարար,  
Ա՛լ էրիր լացիր,

Դուն էլ ինձի չառար,  
Տունը մնացիր,  
Գնա, զալպ ու խային,  
Եար չեղար ինձի»:

Միւս տուները չեմ յիշում, բայց լաւ գիտեմ, որ ժողովածուի միջիններն այս երգին չեն պատկանում և որ գլխաւորն է, առաջ բերուած կրկնակը չ'ունի երգէք: Այդ երգի կրկնակն իմ առաջ բերածս տան վերջին երկու տողն են: № 37 երգի կրկնակի «գարնան քարեր, գուն վարդ արիր»-ը ժողովրդական չէ, այլ թխովի: № 38 Զուլօի երգի կրկնակի վերջին երկու տողը թխովի է: Առաջին եռեակի երկրորդ տողը իւկականի մէջ «սիրուն արի» չ'ունի, այլ «իրգուն արի»: № 40 երգի երկրորդ քառատողի շինծւութիւնը իր պոչը ցոյց է տալիս «սուրարվ» բառի գործածութիւնը, որ ժողովրդական չէ: № 41 երգի մէջ «չար ագռաւը» չի ասում ժողովուրդը, այլ չար ագռաւ, կամ սև ագռաւ: Հարբանի մասին թողնում եմ բան ասել առայժմ: № 42-ի կրկնակի երկրորդ տողը «սիրունիկ, պագդ անուշ է» չ'ունի, որ ժողովրդական չէ, այլ «սիրունի պագնանուշ է»: № 48 երգը երկտող է: առաջին տողի մէջ «մէջ ջիւան» չէ այլ «մէկ ջիւան» անկանկած: Երկրորդ կրկնակն այս երգին չի պատկանում, կպցնովի է: Երկրորդ քառատողի երկրորդ և չորրորդ տողերը թիխովի են: Եթէ «թազացան»-ը պիտի հայերէնի թարգմանուէր, այն ժամանակ «նորացան»-ի տեղ պէտք է վերցնէին ժողովրդական «նորոգուան» ձևը: №№ 24 և 28 երգերը կողքի լէլէներից են, արժէ դրանց իսկականը վերականգնել, որ ժողովածուի մէջ խառնավինթորուել է ուրիշ բովանդակութեան հետ:

№ 24 1) լէ լէ լէ է Ախչի քո սիրուն (կրկնել խօսքերը)  
էրնէկ քո տիրուն

Վայ լէ լէ լէ լէ.

2) լէ լէ լէ է Գնա լալիս էմ (կրկնել)  
Քեզ խօսք տալիս էմ

Վայ լէ լէ լէ լէ.

3) լէ լէ լէ է Գնա գալիս էմ (կրկնել)  
Քեզի առնում էմ

Վայ լէ լէ լէ լէ:

№ 28. 1) Վայ լէ լէ, լէ լէ, լէ լէ, Ով էր տեսէ սիրած  
եարը մոռանայ.  
լէ լէ լէ, լէ, լէ լէ լէ, Ով մոռանայ էրկու աչքով կուրանայ:

2) Վայ լէ լէ լէ, լէ լէ լէ լէ. Ախչի Յանօ խիստ գնացիր  
բաղչէքը,  
լէ լէ լէ, լէ լէ լէ լէ լիքը տարար դարտակ բերիր բող-  
չէքը, ևայն:

Այսքանը շատ բաւական ենք հաշուում ցոյց տալու համար,  
որ խմբագրութիւնը շատ դէպքում ձեռքի տակ եղած նիւթից  
չէ կարողացել ջոկել բուն ժողովրդականը շինծու, թխովի տո-  
ղերից, թէ այդպիսիները նոյնիսկ իբր բանաստեղծութիւն  
լաւ էլ լինէին:

Որովհետև գիրքը կրում է խմբագրեցին անունը, ուստի  
պարտը ենք համարում մի քանի խօսք ասել պ. Արեղեանին, ո-  
րովհետև այն, ինչ որ չենք կարող պահանջելու պ. Կոմիտասից,  
իրաւունք ունենք պահանջելու պ. Արեղեանից, իբր մասնագէ-  
տից և պատրաստութիւն ունեցողից, որ արդէն գործով էլ  
ցոյց է տուել այդ բանը: Ահա մեր նկատողութիւնները.—նախ.  
ժողովրդական երգերը, որոնք ժողովրդի մտքի և հոգու ծը-  
նունդն են, չը պիտի ենթարկուին որևէ սրբագրութեան. դա  
ներելի չէ և ոչ մի տեսակէտից: Ժողովրդական բանաստեղծու-  
թիւնը ազգագրական նիւթ է, գրական, գեղարուեստական, լե-  
զուական և այլ ինդիրներ ուսումնասիրելու համար. այդ նիւ-  
թերը շատ անգամ գալիս են խորը ննութիւնից, նրանք մեզ  
պատմում են անցած գնացած բաներից, խօսուն, կենդանի  
լեզուով: Ասացէք ինդրեմ, ի՞նչ իրաւունքով սրբագրութիւններ  
մտցնել նրանց մէջ: Նա, ով չը գիտէ, ծանօթ չէ հրատարա-  
կուած նիւթին, ինչպէս իմանայ, թէ որպիսի սրբագրութիւններ  
են արուել, ի՞նչ օտար բառեր են հայերէնի վերածուել: Եւ  
առանապարակ ինչո՞ւ այդ բառերը թարգմանել: Իսէր ազգագրա-  
կան գիտութեան ձեռքի տակ եղած նիւթերը տուէք առանց  
սրբագրութեան, այնպէս ինչպէս որ կան. նրանք առանց սըր-  
բագրութեան էլ շատ գեղեցիկ են: Երկրորդ,—երգերը չեն բա-  
ժանուած ըստ գաւառների, այլ խառնիխուռը, մինչդեռ այդ  
անհրաժեշտ է շատ նկատումներով: Գոնէ վերջում ցանկ լինէր  
ըստ գաւառների: Երգորդ.—այբենական ցանկը պէտք է ըստ  
բովանդակութեան լինէր գոնէ: Չորրորդ. անհրաժեշտ է ցոյց  
տալ թէ երգերից որոնք պարերգ են և որոնք ուղղակի  
երգ ու խաղ. կամ գոնէ պարերգերի ցանկը լինէր:

Այսպիսի երգարաններ շատերն են հրատարակել հրէշա-  
ւոր աղաւաղումներով, սակայն և ոչ մէկը չի արժանացել քըն-  
նութեան: Յուսանք, որ յետագայ հրատարակութիւնները լի-  
նին անփոփոխ, առանց սրբագրութեան և լաւ ընտրողութեամբ:

Գրքոյիլ հրատարակուած է լաւ թղթի վրայ, փոքրադիր,  
խնամքով, զինը շատ մատչելի է:

Ա. գ. Ղ.

### ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Կ. Կոստանեանց՝ «Յակով Կարնեցի», տեղեկագիր վերին  
հայոց, յիշատակարան ԺԷ. դարու, Վաղարշապատ, 1903  
թ., գին է ?
- 2) Կ. Կոստանեանց՝ «Նոր ժողովածու», միջնադարեան հայոց  
տաղեր և ոտանաւորներ, դ. պրակ. Վաղարշապատ,  
1903. գ. ?
- 3) Թր. ք. Պետրով «Աւետարանը իբրև մեր կեանքի հիմքը»,  
թարգմ. Հ. Քեչեկեան, Ս.-Պետերբուրգ, 1903 թ., գ. 20 կ.
- 4) «Լոյս», օրացոյց հանդէս 1904 թ., խմբագր. Ե. Թոփչեան,  
գ. 1 լ.
- 5) » » » պատի » » » » » 50 կ.
- 6) » » » փոքր » » » » » 20 կ.
- 7) Խր. Կոչուկъ—Իօաննեսօնъ: «Письмо императора Иоанна  
Цимисхия къ армянскому царю Ашоту III», С.-Петербургъ,  
1903 г. դ. ?
- 8) Յ. Եսայեան՝ «Կեանքի խորշերից», Թիֆլիս, 1903 թ.,  
գին է 20 կ.
- 9) «Եպիկտետի կեանքն ու վարդապետութիւնը», թարգմ. Զա-  
ւէն վարդապետ, ս. Էջմիածին, 1903 թ., գ. 40 կ.
- 10) Վ. Թաւարբէգեան՝ «Բանաստեղծութիւններ», Թիֆլիս,  
1903 թ., գ. 50 կ.
- 11) Ս. Ա. Մելիքъ-Սարկիսյանъ: «Ферганское землетрясение 3  
декабря 1902 года», Москва, 1903 г., դ. ?
- 12) Ա. Աբէլեան՝ «Մկինի հարսանիքը», զին 1 գործ., Բագու,  
1903 թ., գ. 20 կ.